


# ՍԱՌՈՒՅՑԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

Հարգելի հայրենակիցներ, Շոուսթար Պրոդաքշընը տեղեկացնում է, որ սույն թվականի նոյեմբերի 20-ին նախատեսված «Սառույցի թագավորները»՝ հանրահայտ գեղասահորդների մասնակցությամբ համերգային ծրագիրը հետաձգվում է և տեղի կունենա 2016 թվականի մարտի 5-ին:

Շոուսթար Պրոդաքշընը, շոուի պրոդյուսեր Արի Զաքարյանը և շոուի բոլոր մասնակիցները նման որոշում են կայացրել հաշվի առնելով նոյեմբերի 13-ին Ֆրանսիայում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները: Ծրագրում ընդգրկված են Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացիներ Բրայն Ժուբերը, Մարի-Պյեր Լերեն և Գինոնի Սոբատերը, ովքեր Ֆրանսիայի համար այս ծանր օրերին չեն կարող ելույթ ունենալ: Ցավոք, խումբը չի կարող ներկայանալ առանց շոուի առաջատար կատարողների: Մենք խորապես ցավակցում ենք Ֆրանսիայի քաղաքացիներին և խնդրում ձեզ ըմբռնումով մոտենալ համերգի հետաձգմանը:

Միաժամանակ, Շոուսթար Պրոդաքշընը տեղեկացնում է, որ տոմսերի վաճառքը շարունակվում է, իսկ արդեն իսկ ձեռք բերված տոմսերը համարվում են ուժի մեջ 2016 թվականի մարտի 5-ին կայանալիք համերգին ներկայանալու համար: Շոուի պրոդյուսեր Արի Զաքարյանը վստահեցնում և երաշխավորում է, որ 2016 թվականի մարտի 5-ին համերգը անպայման կայանալու է: Տոմսերը կարող եք ձեռք բերել Երևանի բոլոր տոմսարկղերում: Մենք սպասում ենք ձեզ:

«Շոուսթար» Պրոդաքշընի տնօրեն

Սոնա Տանանյան